Doi: 10.56737/2953-7843-2025.07-94

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու
ՄԱՍԷ «Վաչե եւ Թամար Մանուկյան Մատենադարան»

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԾՈՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ[1]

ՆԱԽԱԲԱՆ

Ծոցի արաբական երկրների՝ Քուվեյթի, ԱՄԷ-ի, Քաթարի, Եմենի, Բահրեյնի, Սաուդյան Արաբիայի, Օմանի հայ համայնքները, ի տարբերություն հայկական դասական գաղութների, ծնունդ են ոչ թե Հայոց ցեղասպանությունից մազապուրծ, իրենց բնօրրաններից բռնագաղթած հայերի՝ այս տարածաշրջանում ապաստանելու, այլ ձեւավորվել են հայ գաղթաշխարհում կատարված ներքին տեղաշարժերի ու սփյուռքահայության բնական վերարտադրության եւ աճի արդյունքում։ Ծոցի հայ համայնքները հիմնականում ձեւավորվել են բնակչության աշխատանքային ներգաղթի արդյունքում, երբ Ի. հարյուրամյակի վերջին քառորդին ու ԻԱ. դարասկզբի առաջին տասնամյակներին հայ վերաբնակիչները Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Իրանից ու Հորդանանից հաստատվեցին Ծոցի՝ բարձրորակ մասնագետների պահանջ ունեցող արաբական երկրներում՝ ձեւավորելով կամ ստվարացնելով այդ երկրների հայ համայնքները։ 1979 թ. Ծոցի տարածաշրջանը դարձել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական փոխանորդություն, իսկ դեկտեմբերին, քուվեյթահայ ազգային գործիչ Մելիք Մելիքսեթյանի նախաձեռնությամբ եւ Քուվեյթում կաթողիկոսական փոխանորդ Օշական վրդ. Զոլոյանի գործուն մասնակցությամբ կազմվել է ազգային առաջին վարչությունը, մշակվել համայնքի ներքին կանոնադրությունը, գործել վարձակալած եկեղեցին՝ դպրաց դասով։ 1993 թ. ԱՄԷ-ի հայ համայնքն ունեցել է մշտական հոգեւոր հովիվ։ 1994 թ. տարածաշրջանը թեմի կարգավիճակ է ստանում, ընտրությամբ ստեղծվում է 3 հոգեւորականից

---

[1]* *Ստացվել է՝ 2.08.2025, գրախոսվել է՝ 12.08.2025։ էլ. հասցե՝* armanmaloyan@mail.ru, armanmaloyan1976@gmail.com:

եւ 18 աշխարհականից բաղկացած թեմական խորհուրդ։ 1995 թ.՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. կաթողիկոսի՝ ԱՄԷ կատարած հայրապետական առաջին այցի ընթացքում, Շարժայի կառավարիչ շեյխ Սուլթան Բեն Մոհամմեդ ալ Քասիմին, անսալով Վեհափառի խնդրանքին, տեղի հայությանը տրամադրում է հողատարածք եւ արտոնում եկեղեցի կառուցել։ 1997 թ. կատարվում է Շարժայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը։ Եկեղեցին կառուցվում է ճարտարապետ Բաբկեն Այվազյանի նախագծով։ 1998 թ. նոյեմբերի 15-ին կատարվում է նորակերտ եկեղեցու նավակատյաց հանդեսը։ Եկեղեցու օծման հանդիսությանը հաջորդեց նորակառույց Օհաննէսեան վարժարանի եւ Փիեռ Քէօսէեան սրահի բացման հանդիսավոր արարողությունը։ 2012 թ. մայիսի 4-ին Արամ Ա. Հայրապետը կատարում է Աբու Դաբիի Սրբոց Նահատակաց եկեղեցու հիմնարկեքի արարողությունը[2], իսկ օծման հանդիսավոր արարողությունը տեղի է ունենում 2014 թ. դեկտեմբերի 27-ին[3]։ ՀԱԵ-ն, վարժարանները, Ազգային վարչությունները, ավանդական կուսակցությունները, հանձնաժողովները, բարեգործական ու բազմատեսակ այլ միությունները (հատկապես՝ կրթական ու մշակութային) բացառիկ կարեւոր դեր են կատարում ինչպես ԱՄԷ-ի, այնպես էլ ամբողջ Ծոցի հայ համայնքների ազգային-եկեղեցական կյանքի կազմակերպման, բարելավման ու աշխուժացման եւ հայապահպանության գործում։

ՀԱՅԵՐԸ ԾՈՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ինչպես վերը նշեցինք, Ծոցի հայ համայնքները հիմնականում ձեւավորվել են որպես աշխատանքային միգրացիայի հետեւանք, երբ Ի. դարի վերջին քառորդին ու ԻԱ. դարասկզբի առաջին տասնամյակներին Սիրիայից, Լիբանանից, Իրաքից, Եգիպտոսից, Իրանից ու Հորդանանից հայ վերաբնակիչներ հաստատվեցին բարձրորակ մասնագետների պահանջ ունեցող Ծոցի արաբական երկրներում՝ ձեւավորելով կամ ստվարացնելով այդ երկրների հայ համայնքները։

---

[2] *Տե՛ս Հայկական Սփիւռք։ Տարեգիրք, 2012, ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, Երեւան, 2012, էջ 204։*

[3] *Տե՛ս* Г. Погосян (Хахбакян), Памятники армянской архитектуры и топонимики в странах Юго-Западной Азии. ОАЭ, Кувейт, Ирак, Иордания // https://artsakhlib.am/wp-content/uploads/2020/04/Гагик-Погосян-Хахбакян-Памятники-армянской-архитектуры.pdf, *էջ 4 (79), մուտք՝ 30.05.2024 թ.։*

2003 թ. տվյալներով՝ ԱՄԷ-ի հայ բնակչությունը մոտ 2 հազար մարդ էր, որոնք հիմնականում բնակվում էին Շարժա, Դուբայ, Աբու Դաբի, մասամբ էլ՝ Աջման, Ումմ ալ Քայվայն, Ֆուժեյրա եւ Ռաս էլ Խայմա քաղաքներում[4]։ Ըստ Սփյուռքի նախարարության պաշտոնական վիճակագրության՝ ԱՄ Էմիրություններում բնակվող հայերի թիվը 2013 թ. կազմել է շուրջ 5000–6000 հայ[5]։

ԱՄԷ-ում հաստատված հայերը, որոնց մեծամասնությունը պետական ու մասնավոր հիմնարկություններում աշխատող ծառայողներ են, նաեւ բժիշկներ, ճարտարապետներ, ճարտարագետներ, ձեռներեցներ ու արհեստավորներ, հիմնականում եկել են Լիբանանից ու Սիրիայից, մասամբ նաեւ Իրաքից, Իրանից ու Հայաստանից։ Այստեղ հայերն ապրում են ժամանակավոր կենվորի կարգավիճակով եւ երկու-երեք տարին մեկ պարտավոր են ստանալ կացության արտոնաթուղթ։ Հայ համայնքին բնորոշ են ներհոսքի ու արտահոսքի համաժամանակյա գործընթացները։ Որոշակի գումար կուտակած ու բարեկեցություն ապահոված հայերի մի մասը վերադառնում է իր բնակության նախկին երկիրը, նրանց փոխարեն այստեղ են գալիս նոր վերաբնակիչներ՝ հիմնականում Արեւելքի հայ գաղթավայրերից։

1998 թ. հունիսի 25-ին ԱՄԷ-ի եւ ՀՀ-ի միջեւ հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ։ 2000 թ. սեպտեմբերի 23-ին մայրաքաղաք Աբու Դաբիում բացվել է ՀՀ դեսպանատունը[6]։ Երկու երկրների միջեւ հաստատված բարեկամական հարաբերությունները նպաստավոր են նրանց միջեւ բազմակողմանի համագործակցության ձեւավորման ու զարգացման տեսանկյունից։

2016 թ. տվյալներով՝ ԱՄԷ-ում բնակվում էր շուրջ 10 000 հայ[7], որոնք կենտրոնացած էին հիմնականում Շարժա, Դուբայ քաղաքներում եւ մայրաքաղաք Աբու Դաբիում։ ԱՄԷ-ի հայ համայնքի կապը Մայր հայրենի-

---

[4] *Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, Երեւան, 2003, էջ 98–99։*

[5] *Տե՛ս* Ա. Ներսիսյան, *Հայկական սփյուռքի աշխարհագրություն, Վանաձոր, 2014, էջ 129։*

[6] *Տե՛ս* Ն. Հովհաննիսյան, *Արաբական երկրների պատմություն, հտ.* III. *Անկախության եւ ինքնիշխանության դարաշրջան. 1918–2005 թթ., Երեւան, 2006, էջ 144,* https://www.mfa.am/hy/bilateral-relations/ae, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[7] *Տե՛ս ԱՄԷ-ի ավելի քան 10-հազարանոց հայկական համայնքը համախմբվում է ազգային կառույցների շուրջ //* https://armenpress.am/arm/news/867268/armyanskaya-obshchina-oae-obedinena-vokrug-nacionalniykh-organizaciiy.html, https://www.orer.am/?p=244037&l=am, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

քի հետ բավականին կենսունակ է, եւ համայնքի ներկայացուցիչները գործուն կերպով մասնակցում են համահայկական միջոցառումներին։ 2017 թ. համայնքի ղեկավարներից Աբու Դաբիի կիրակնօրյա վարժարանի բարերար Արա Խանոյանին, ինչպես նաեւ բարերարներ Հրայր Սողոմոնյանին ու Հարություն Օհաննեսյանին, ի գնահատումն Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման եւ զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի ու երկարամյա հայրենանվեր գործունեության, ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը պարգեւատրել է «Մովսես Խորենացի» մեդալով[8]։ Ուշագրավ է նաեւ, որ երբեմն համայնքից տեղի է ունենում հայրենադարձություն։ Այդպիսի ուրախալի օրինակ է Հրաչ Գեւորգյանի բազմանդամ ընտանիքի հայրենադարձությունը եւ հաստատվելը Մայր հայրենիքում[9]։

2025 թ. հունիսի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկօրյա այցով մեկնել է Արաբական Միացյալ Էմիրություններ, հանդիպումներ է ունեցել ԱՄԷ-ի հայ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաեւ Կալկաթայի Սուրբ Նազարեթ Եկեղեցու եւ Հայոց Մարդասիրական ճեմարանի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ ճեմարանի գործունեությանն ու համայնքային կյանքին առնչվող հարցերի շուրջ[10]։

Քուվեյթի հայ գաղութը ձեւավորվել է 1950-ական թթ.։ Արդեն 1954 թ., շուրջ 1000 հայ բնակիչ ունեցող գաղթավայրն ստեղծում է իր համայնքային առաջին կառույցը՝ Ազգային վարչությունը, որը կարեւոր դեր է խաղացել հայության համախմբման եւ ներհամայնքային կյանքի կազմակերպման գործում։ Մեծ թվով հայեր են մեկնել Քուվեյթ՝ իրենց տնտեսական վիճակը բարելավելու նպատակով։ Հետագա տարիներին գաղթավայրը շարունակել է համալրվել հատկապես Սիրիայից ու Իրանից ներգաղթած հայերով։ Եթե 1965 թվականին Քուվեյթում ապրում էր շուրջ 3000 հայ, ապա 1969 թ. այդ թիվը հասավ 8000-ի[11]։ Հայերի ապրելու եւ աշխատանքի համար Քուվեյթում առկա էին բարենպաստ պայ-

---

[8] *Տե՛ս* Վ. Հովհան, *Արաբական Միացյալ Էմիրությունների հայ համայնքը* // http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16571, http://www.president.am/hy/decrees/item/3311/, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[9] Կարինէ Աւագեան, *Ես իմ 5 երեխաներս բերի՝ իբրեւ նուէր Հայրենիքիս* // https://old.hayernaysor.am/cl/archives/265556, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[10] *Տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոսը մեկնել է Արաբական Միացյալ Էմիրություններ* // https://armenpress.am/hy/article/1221715, *մուտք՝ 27.08.2025 թ.։*

[11] *Համազասպյան Վ., էջեր հայ գաղթավայրերի պատմությունից, Երեւան, 2015, էջ 101։*

մաններ։ 1963 թ. համայնքի հանգանակած միջոցներով ու բարերարների նվիրատվություններով կառուցվել է եկեղեցի-հանդիսասրահ։ 1982 թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հոգեւոր ենթակայությամբ կազմավորվել է Քուվեյթի եւ Արաբական ծոցի երկրների թեմը՝ էլ Քուվեյթ կենտրոնով[12]։ Սփյուռքահայ գաղթավայրերի շարքում իր համախմբվածությամբ ու բարեկեցիկ կյանքով առանձնացող Քուվեյթի հայ համայնքը 1980-ական թթ. երկրորդ կեսին շարունակում էր ստվարանալ ու բարգավաճել։ 1990–1991 թթ., մինչեւ Ծոցի պատերազմը, Քուվեյթի հայ համայնքում հաշվվում էր շուրջ 10 000–12 000[13] կամ 10 000–13 000[14] հայ։ Համայնքն ապրում էր մշակութային աշխույժ կյանքով։ Քուվեյթի իրաքյան բռնազավթման ու պատերազմական գործողությունների պատճառով հայերն ստիպված հեռանում են ապահով ափեր, հայ համայնքի անդամների թվաքանակն արագորեն նվազում է (հայության թիվը կազմում էր մոտ 600 հոգի), ազգային կյանքն անկում է ապրում։ Քուվեյթում իրաքյան ներխուժման ու վերահսկողության ժամանակաշրջանում (մոտ 6 ամիս) մնացել էին շուրջ 500–2500 հայեր[15]։ Պատերազմից հետո քուվեյթահայության զգալի մասը վերադառնում է, ձեռնամուխ լինում պատերազմի հետեւանքների վերացմանն ու հայ համայնքի վերաշինմանը։ Քուվեյթի հայ համայնքը վայելում է պետության հարգանքը, իշխանությունները բարձր են գնահատում հայերի ներդրումը երկրի տնտեսական կյանքում՝ նպաստելով համայնքի ազգային կյանքի աշխուժացմանը։ Դրա վկայություններից է Հայոց Եկեղեցու կառուցման փաստը։ 2017 թ. մայիսի 19-ի առավոտյան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Առաջին Հայրապետը կատարում է Ազգային Առաջնորդարանի բացման արարողությունը, իսկ նույն օրը երեկոյան Նորին Սրբությունն օծում է Սրբոց Վարդանանց նորակառույց եկեղեցին[16], որ աղոթատուն դարձավ է բոլոր հարանվանությունների հայ հավատացյալների համար։

---

[12] *Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 617։*

[13] *Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 618։*

[14] *Տե՛ս* Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *նշ. աշխ., հտ.* IV, *2007, էջ 670։*

[15] *Տե՛ս* Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՓԱՇԱՅԱՆ, *Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ, Երեւան, 2013, էջ 11։*

[16] *Տե՛ս Արամ Ա.-ն կօծի Քուվեյթի նորակառույց Սրբոց Վարդանանց եկեղեցին //* https://www.yerkir.am/news/view/129585.html, *մուտք՝ 30.05.2024 թ.*

1992 թ. Քուվեյթը ճանաչեց ՀՀ-ի անկախությունը, իսկ 1994 թ. հուլիսին երկու երկրների ներկայացուցիչները Մոսկվայում ստորագրեցին դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին հուշագիր[17]։

2009 թ. նոյեմբերի 3–4-ը պաշտոնական այցով Քուվեյթում եղավ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, իսկ 2011 թ. մայիսին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցեց Քուվեյթի հայկական Ազգային վարժարանի 50-ամյա հոբելյանական տարեդարձին նվիրված միջոցառումներին[18]։

2013 թ. տվյալներով՝ Քուվեյթում բնակվում էր շուրջ 500 հայ[19]։

2021 թ. տվյալներով՝ Քուվեյթում հայերի թիվը շուրջ 4000[20]–5000 է, որոնց գերակշիռ մասն ապրում է մայրաքաղաքում[21]։ Համայնականների մեծամասնությունը արհեստավորներ ու ավտոմեքենաների եւ դրանց պահեստամասերի առքուվաճառքով զբաղվող ձեռներեցներ են, փոքր մասը՝ պետական ծառայողներ ու մտավորականներ։ Համայնքը գրեթե ամբողջությամբ հայախոս է, խառնամուսնությունների թիվն էլ համարյա զրոյական է[22]։

Բահրեյնի եւ ՀՀ-ի հարաբերությունները ձեւավորվել են երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվելուց (1996 թ. հոկտեմբերի 25) անմիջապես հետո։ 2005 թ. գարնանը ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը պաշտոնական այցով եղավ Բահրեյնում, որի ընթացքում կողմերը հավաստեցին հետագա համագործակցության պատրաստակամությունը[23]։

Բահրեյնի հայությունը փոքրաթիվ է եւ աճի միտումներ չեն նկատվում։ Ըստ 2004 թ. վերաբերող մի տվյալի՝ Բահրեյնում ապրում էր մոտ 30 հայ[24] կամ շուրջ տասը հայ ընտանիք։ Շատ հայեր Բահրեյնում հանգրվանում են որպես տարանցիկ ճանապարհորդներ՝ հետագայում այլ երկր-

---

[17] *Տե՛ս* Ն. Հովհաննիսյան, *նշ. աշխ., հտ.* IV, *էջ 671։*

[18] *Տե՛ս* https://www.mfa.am/hy/bilateral-relations/kw, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[19] *Տե՛ս* Ա. Ներսիսյան, *նշ. աշխ., էջ 130։*

[20] *Տե՛ս* Տ. Ղանալանյան, *Հայկական սփյուռքի պատմության որոշ հիմնախնդիրներ։ Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երեւան, էջ 45։*

[21] *Տե՛ս* https://hy.armradio.am/archives/361276?fbclid=IwAR2JwFOBk4m2U3kQnG38IcVQbmLAsckblK6niq7TBR309YTgN6cPPHlJYZA, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[22] *Տե՛ս* Լ. Հարությունյան, Ա. Փաշայան, *նշ. աշխ., էջ 14։*

[23] *Տե՛ս* Ն. Հովհաննիսյան, *նշ. աշխ., հտ.* III, *էջ 176։*

[24] *Տե՛ս* Մ. Մալխասյան, *Հայերն աշխարհում, Երեւան, 2007, էջ 22։*

ներ ապաստանելու մտադրությամբ։ Հայության փոքրաթիվ լինելու հանգամանքով պայմանավորված՝ այստեղ ցայժմ չկան ձեւավորված ազգային կառույցներ։ 2012 թ. տվյալներով՝ Բահրեյնում բնակվում էր շուրջ 100 հայ[25]։

Եմենի Հանրապետության եւ ՀՀ միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1995 թ. մայիսի 26-ին[26]։

ՀՀ-ի անկախացումից հետո Քաթարը ճանաչեց ՀՀ անկախությունը, եւ երկու երկրները 1997 թ. նոյեմբերի 5-ին[27] հաստատեցին դիվանագիտական ու բարեկամական հարաբերություններ, որոնք ավելի սերտացան, երբ 2005 թ. Քաթար այցելեց ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը։ Քաթարի էմիր Համադ իբն Խալիֆայի պաշտոնական ընդունելության ժամանակ կողմերը կարեւորեցին երկկողմ հարաբերությունների զարգացումը՝ տնտեսության, մշակույթի, գիտության եւ այլ ոլորտներում[28]։

Վերջին տարիներին Քաթարի տնտեսական կյանքում մի շարք ոլորտների արագ զարգացման, հատկապես՝ շինարարական մեծածավալ ծրագրերի իրականացման արդյունքում, կտրուկ ավելանում է ներգաղթողների, այդ թվում նաեւ հայերի, հոսքը։ 2013 թ. տվյալներով Քաթարում բնակվում էր շուրջ 600 հայ[29]։ Վիճակագրական բնույթի վերջին տվյալների համաձայն՝ Քաթարում ապրում է ընտրելու իրավունք ունեցող մոտ 228 հայ, իսկ հայ համայնքի անդամների ընդհանուր թիվը շուրջ 350–500 է։ Տեսական հաշվարկներով առաջիկա 4–5 տարիների ընթացքում տեղի հայության թիվը թերեւս կարող է հասնել 1000-ի[30]։ Քաթարի փոքրաթիվ հայ համայնքը, փորձելով պահպանել հայկականությունը, հայեցի ոգին ու դիմագիծը, իր գնահատելի ներդրումն ունի այդ երկրի զարգացման գործում։

Հայաստանի Հանրապետության եւ Սաուդյան Արաբիայի Թագավորության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են

---

[25] *Տես* Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՓԱՇԱՅԱՆ, *նշ. աշխ., էջ 139։*

[26] *Տես* Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *նշ. աշխ., հտ.* III, *էջ 381։ Բացի երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հիշատակությունից՝ Եմեն – ՀՀ հարաբերությունների մասին ոչ մի այլ հիշատակություն մենք չգտանք ոչ ՀՀ ԱԳՆ-ի, ոչ էլ ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի պաշտոնական կայքէջերում։*

[27] *Տես* https://www.mfa.am/hy/bilateral-relations/qa, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[28] *Տես* Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *նշ. աշխ., հտ.* III, *էջ 787։*

[29] *Տես* Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ, *նշ. աշխ., էջ 130։*

[30] *Տես* Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՓԱՇԱՅԱՆ, *նշ. աշխ., էջ 32։*

2023 թ. նոյեմբերի 25-ին[31]։ Հայաստանի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ առկա են առեւտրատնտեսական կապեր ու ապրանքաշրջանառության որոշակի ծավալներ[32]։

1991 թ. դեկտեմբերի 28-ին Օսմանի Սուլթանությունը ճանաչեց ՀՀ անկախությունը, եւ երկու երկրները 1992 թ. հուլիսին դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին[33]։ Հայ-օսմանական հարաբերությունները ունեն մեծ հեռանկարներ ու զարգացման ներուժ, սակայն այս պահին դրանք բավարար չափով խորացած չեն։ 2017 թ. նոյեմբերի 6–7-ը մայրաքաղաք Մասկատում կայացել են հայ-օսմանական քաղաքական խորհրդակցություններ[34], բայց ափսոսանքով պիտի նկատենք, որ Օսմանի Սուլթանության հասարակական-տնտեսական կյանքում հայ համայնքի ունեցած դերի ու նշանակության մասին հանգամանալից տեղեկություններ չկարողացանք ձեռք բերել։

Սաուդյան Արաբիայում, Եմենում եւ Օմանում բնակություն հաստատած հայերի վերաբերյալ տեղեկություններ հայթայթելու ուղղությամբ մեր պրպտումները, ցավոք, արդյունքներ չտվեցին։

Հայրենիք–Սփյուռք կապերի սերտացման ու համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաեւ հայապահպանության խնդիրների լուծմանը միտված ՀՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին, սփյուռքահայ կրթական ու համայնքային գործիչների ամենամյա ամառային դպրոցներին, հայ պատանիների ու երիտասարդների հայրենաճանաչության ու հայրենասիրության ձեւավորման ու զարգացման «Արի տուն» ծրագրին, «Իմ Հայաստան» մշակութային փառատոներին, Համահայկական խաղերին ու համահայկական այլ միջոցառումներին (Հայաստան–Սփյուռք համաժողով, Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների եւ համայնքների ղեկավարների համահայկական համաժողով, Հայ բժիշկների, ճարտա-

---

[31] *Տե՛ս* https://www.mfa.am/hy/bilateral-relations/sa#:~:text=Հայաստանի%20Հանրապետության%20և%20Սաուդյան%20Արաբիայի%20Թագավորության%20միջև%20դիվանագիտական,դեսպան%20Է%20նշանակվել%20Կարեն%20Գրիգորյանը%20%28նստավայրը%20Արու%20Դաբի%29%3A, *մուտք՝ 30.05.2025 թ.։*

[32] *Ավելի մանրամասն տե՛ս* https://www.mfa.am/hy/bilateral-relations/sa, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

[33] *Տե՛ս* Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *նշ. աշխ., հտ.* IV, *էջ 709։*

[34] *Տե՛ս* https://www.mfa.am/hy/bilateral-relations/om, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

բապետների, իրավաբանների, լրագրողների համահայկական համաժողովներ[35] եւ այլն) իրենց մասնակցությունն են բերում նաեւ Ծոցի երկրների հայ համայնքների ներկայացուցիչները։ Նշելի է, որ Ծոցի երկրների (ԱՄԷ, Քուվեյթ, Քաթար) հայ համայնքների երեւելի ներկայացուցիչներն ու կրթական մշակները պարբերաբար մասնակցում են Մայր հայրենիքում կազմակերպվող համահայկական միջոցառումներին։ Այդպիսի օրինակ է 2017 թ. սեպտեմբերի 18–20-ը Երեւանում գումարված Հայաստան–Սփյուռք վեցերորդ համաժողովին ԱՄԷ-ի (26 հոգի), Քուվեյթի (14 հոգի), Քաթարի (16 հոգի) հայ համայնքների՝ պատկառելի թվով ներկայացուցիչների ու կրթական մշակների մասնակցությունը[36]։ Ուշագրավ է, որ արդեն բազմամյա գեղեցիկ ավանդույթ է, երբ ամեն տարի Մայր հայրենիքում կազմակերպվող՝ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացին մասնակցող ուսուցիչներն այցելում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ արժանանում Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությանը։ Հանդիպմանը Նորին Սրբությունը հետաքրքրվում է Սփյուռքում գործող հայկական կրթարաններով եւ ուսուցիչներին հուզող խնդիրներով, իսկ վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթում է, որ Աստված օրհնի ու քաջառողջ պահի մանկավարժներին՝ իրականացնելու իրենց սրբազան առաքելությունն ի սեր մեր աշխարհասփյուռ ժողովրդի[37]։

ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԾՈՑԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Մայր հայրենիքի սահմաններից դուրս բնակվող հայ հանրության հարատեւ կենսագործունեության առաջնահերթ խնդիրն է ազգի սփյուռքաբնակ հատվածի ազգային դիմագծի ու ինքնության ձեւավորման,

---

[35] *Համահայկական միջոցառումների ու արդի փուլում Հայաստան–Սփյուռք հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Հայրենիք–Սփյուռք հարաբերությունները. 1918 թվականից մինչեւ մեր օրերը, Երեւան, 2017, էջ 203–225,* Ք. Պետրոսյան, *Հայրենիք–Սփյուռք հարաբերությունները 1988–2001 թթ., Երեւան, 2011, էջ 61–183,* Ա. Ներսիսյան, *նշ. աշխ., էջ 192–201,* Է. Մինասյան, *Հայրենիք–Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001–2017 թթ.), Երեւան, 2018, էջ 65–135։*

[36] *Տե՛ս ՀՀ Սփյուռքի նախարարություն, Հայաստան–Սփյուռք վեցերորդ համաժողովի մասնակիցների ցուցակ (18–20 սեպտեմբեր, 2017 թ., Երեւան), Երեւան, 2017, էջ 3–6, 79–80, 148–150։*

[37] *Տե՛ս Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց սփյուռքահայ ուսուցիչների հետ //* https://www.armenianchurch.org/hy/news/ամենայն-հայոց-կաթողիկոսը-հանդիպեց-սփյուռքահայ-ուսուցիչների-հետ-22-07-19/4156, *մուտք՝ 27.08.2025 թ.։*

զարգացման ու պահպանման համար պատասխանատու կառույցների (համայնքային կառավարման մարմիններ, եկեղեցի, դպրոց, մշակութային եւ կրթական միություններ ու կենտրոններ, հայալեզու մամուլ, ԶԼՄ-ների այլ միջոցներ) ստեղծումն ու դրանց անխաթար եւ արդյունավետ գործունեության ապահովումը։ Այդ կառույցները պետք է մայրենի լեզվով իրականացնեն ազգային հոգեկերտվածքով եւ ազգային արժեհամակարգի կրող հայրենասեր քաղաքացու կրթությունն ու զարգացումը։ Հայեցի կրթության ու հայապահպանության դարբնոցը դպրոցն է՝ սրտացավ, առաքելանվեր ու առաքելակատար հայ ուսուցիչներով։ Հայեցի կրթության իրականացման հայրենանվեր գործում հայ դպրոցին եւ ուսուցչությանը մեծապես սատարում են վերոհիշյալ պատասխանատու կառույցները։

Հայ համայնքների թեմական խորհուրդների ու ազգային վարչությունների գլխավոր խնդիրը պետք է լինի համախմբել հայությանը, արդյունավետ կազմակերպել հայեցի կրթության գործը, նպաստել մատաղ սերնդի՝ ազգային եւ համամարդկային մնայուն արժեքների ու ավանդույթների ոգով դաստիարակության գործին։

1980 թ. մարտին համայնքային կառույցների ու ազգային գործիչների ջանքերով հիմնվել են Շարժայի, իսկ 1980 թ. հոկտեմբերին՝ Աբու Դաբիի հայկական միօրյա վարժարանները, որոնք այժմ եւս շարունակում են իրականացնել իրենց կրթադաստիարակչական առաքելությունը։ Այդ վարժարաններում դասավանդվում են հայոց լեզու եւ հայ գրականություն, հայոց պատմություն, երգ-երաժշտություն, կրոն (Հայոց Եկեղեցու պատմություն)։ Հայ համայնքն ունի նաեւ մանկապարտեզի երեք բաժին, նախակրթարան ու շրջանավարտ դասարան։ 2003 թ. Աբու Դաբիի վարժարանը (տնօրեն՝ Թամար Տեր-Օհաննեսյան) ուներ 60, Շարժայինը (տնօրեն՝ Վիգեն Գլընճյան)՝ 115 աշակերտ։ Աբու Դաբիում գործում էր նաեւ կրոնական թեքումով հայկական միօրյա վարժարան՝ 35 աշակերտով։ Վարժարանի հիմնադիր-տնօրենն էր Վարդան Ինկիլիզյանը։ Բոլոր երեք հայկական վարժարաններում դասավանդում էին շուրջ 30 ուսուցիչներ[38]։

Շարժայի Օհաննէսեան վարժարանի հոգաբարձուների խորհուրդը զգալի ջանքեր է գործադրում ուսումնական հաստատության կայացման ուղղությամբ, պատասխանատու է ուսումնական ծրագրերի, սաներին

[38] Տե՛ս Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 99։

գրենական պիտույքներով ապահովելու, արտադասարանական գործունեության, սաների սննդի ընտրության ու կազմակերպման, դասացուցակի կազմման եւ մի շարք այլ հարցերում։

Շարժայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործում է կիրակնօրյա վարժարան, որը հիմնադրվել է 2001 թ. սեպտեմբերի 28-ին։ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության՝ վարժարանների համար նախատեսված ուսումնական ծրագրերով կազմակերպվող եւ մեկուկես ժամ տեւողությամբ դասերն ընթանում են 4 դասարաններում՝ սկսնակ, կրտսեր, միջին եւ պատանի։ Վարժարանում ուսուցանվում են գրաբար, կրոնական, ծիսական եւ բարոյագիտական գիտելիքներ, աղոթքներ, սաղմոսներ։ Վարժարանի ծրագրի մաս են կազմում տարեկան կրթադաստիարակչական ձեռնարկները, ձեռքի աշխատանքը, թատրոնը, ուսանելի խաղերը եւ այլն։ Վարժարանի ուսուցչական կազմն իր մասնակցությունն է բերում ազգային հոգեւոր կառույցի եւ Արաբական Միացյալ Էմիրություններում Ս. Գրային ընկերակցության կազմակերպած համագումարներին եւ հանդիպումներին։ Վարժարանի սաները 3–16 տարեկան հայ մանուկներ ու պատանիներ են։ 2001–2007 թթ. դպրոցն ունեցել է 4 ուսուցիչ եւ 55 աշակերտ, 2007–2008 թթ.՝ 1 ուսուցչուհի եւ 55 աշակերտ, 2008–2010 թթ.՝ 3 ուսուցչուհի եւ 52 աշակերտ, 2010–2011 թթ.՝ 5 ուսուցչուհի եւ 75 աշակերտ, 2011–2012 թթ.՝ տնօրեն, 6 ուսուցչուհի եւ 83 աշակերտ։ 2010–2011 թվականներից վարժարանն ունեցավ նոր դասարան, որը նախատեսված է 12–16 տարեկան պատանիների համար[39]։

ԱՄԷ-ի հայ համայնքի կրթական կյանքում անուրանալի է շուրջ կեսդարյա ավանդ ունեցող Աբու Դաբիի միօրյա վարժարանի դերը։ Վարժարանը գործել է տեղական մի շարք դպրոցներում, այդ թվում նաեւ Սուրբ Հովսեփ կաթոլիկ եկեղեցուն պատկանող հաստատության մեջ։ Վարժարանն ապահովում է 8-ամյա կրթություն, հաճախում են 3–14 տարեկան հայ երեխաներ եւ պատանիներ։ Ուսուցչական կազմի, տեսչության կամավոր աշխատանքի եւ ծնողների համագործակցության շնորհիվ դպրոցն ապրում է աշխույժ կյանքով։ Այստեղ դասարաններ կան նաեւ ոչ հայախոս երեխաների համար։ Յուրաքանչյուր դասարան ունի իր դաստիարակ-մանկավարժը։

---

[39] *Տես* Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՓԱՇԱՅԱՆ, *նշ. աշխ., էջ 60։*

Վարժարանների կազմակերպած միջոցառումները նպաստում են հայ երեխաների հոգիներում ու սրտերում հայ գրի, հայոց մշակույթի եւ Հայրենիքի նկատմամբ սեր արթնացնելուն, ազգային դիմագծի կերտմանն ու պահպանմանը։

Աբու Դաբիի Սրբոց Նահատակաց եկեղեցուն կից միօրյա դպրոցի բարերարն է Արա Խանոյանը, ում պատվին դպրոցը կրում է «Արա Խանոյեան ազգային վարժարան» անունը։ Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից «Օհաննէսեան» դպրոցի բարերարն է նշանաւոր գործարար Հարութիւն Օհաննեսյանը։

Թամար Տեր-Օհաննեսյանից հետո Աբու Դաբիի հայկական միօրյա վարժարանի տնօրեն դարձավ Գյուլիզար Ջոնյանը, այնուհետեւ Բագրատ Պալապանյանը։

Աբու Դաբիում գործող «Սուրբ Սահակ-Մեսրոպ» կիրակնօրյա դպրոցի պատասխանատուն Սիրուն Գոճաքյանն է։ Կիրակնօրյա դպրոցի դասընթացներին մասնակցելու համար 2012 թ. արձանագրվել է ութ աշակերտ։ Պատասխանատուները հույս ունեն, որ սաների թիվը կավելանա։ Դասավանդումն այստեղ նույնպես իրականացվում է կամավորության սկզբունքով[40]։

1958 թվականից Քուվեյթում սկսեց գործել կիրակնօրյա դպրոց։ 1960 թ. Երվանդ Թերզյանի նախաձեռնությամբ հիմնվում է Հայ-արաբական դպրոցը, որի աշակերտների մեծ մասն այլազգի էր։ 1961 թ. այս դպրոցի հիման վրա, Քուվեյթի կառավարության արտոնությամբ, ստեղծվում է Հայ ազգային վարժարանը, որի վարիչ-տնօրեն է նշանակվում արժանապատիվ Տեր Պարույր քահանա Սարգսյանը։

Դեպի Քուվեյթ հայերի նոր հոսքի արդյունքում աճում է Քուվեյթի ամենօրյա Հայ ազգային վարժարանի սաների թիվը, եւ 1969–1970 ուսումնական տարվանից վարժարանն ստանում է միջնակարգ դպրոցի կարգավիճակ։ 1974 թ. եկեղեցու տարածքում, համայնքի հանգանակած միջոցների հաշվին, կառուցվում ու շահագործման է հանձնվում վարժարանի՝ նորակառույց եռահարկ շենքը։ 1990 թվականից Ազգային վարժարանի տնօրենն էր Ավետիս Ագթավուքյանը, ապա Աստուր Պողոսյանը (2000–2004 թթ.), 2005-ից՝ Մանուկ Մանուկյանը, իսկ ներկայիս՝ Ներսես Սարգսյանը։ 1990–1991 թթ., մինչեւ Ծոցի պատերազմը, Քուվեյթի ազգային

---

[40] *Անդ, էջ 61, 63։*

վարժարանն ուներ շուրջ 720 աշակերտ եւ մոտ 60 ուսուցիչ։ Պատերազմն աղետալի հետեւանքներ ունեցավ նաեւ Քուվեյթի հայ համայնքի կրթական կյանքում։ Պատերազմից հետո տակավ առ տակավ Քուվեյթի հայ համայնքը վերագտավ իրեն, ձեռնամուխ եղավ պատերազմի հետեւանքների վերացման ու համայնքային կյանքի աշխուժացման գործին։ Վերաբացված Հայ ազգային վարժարանը, որը 2003 թ. արդեն ուներ շուրջ 400 սան, իր գործունեությունը շարունակեց բոլոր բաժիններով՝ մանկապարտեզ, նախակրթարան (1–4-րդ դասարաններ), միջնակարգ (5–8-րդ դասարաններ) եւ երկրորդական (9–12-րդ դասարաններ)։ Վարժարանի ուսուցիչներից շատերը մասնագիտական կրթություն են ստացել Մայր հայրենիքում։ Բացի պետության սահմանած հանրակրթական պարտադիր առարկաներից՝ վարժարանում դասավանդվում են (արեւմտահայերենով) հայոց լեզու եւ հայ գրականություն (Բերիո թեմի ծրագրով), Հայոց պատմություն (Ամերիկայի Արեւմտյան թեմի ծրագրով), կրոն, անգլերեն։

Քուվեյթի ազգային վարժարանը 2016–2017 ուսումնական տարում ունեցել է 398 սան։ Այժմ վարժարանում սովորում են միայն հայ աշակերտներ։ Նրանց բարձրորակ կրթությունն ապահովում են շուրջ 56 հայ եւ օտարազգի ուսուցիչներ։ Ազգային վարժարանը Մերձավոր Արեւելքի հայկական ուսումնական հաստատությունների շարքում լավագույններից մեկն է։ Շրջանավարտներն ընդունվում են ոչ միայն արաբական երկրների բուհեր, այլեւ իրենց կրթությունը շարունակում են Հայաստանի համալսարաններում[41]*։*

Շուրջ 10–15 տարի առաջ Քաթարի ներքաղաքական կյանքում զգալի էր կրոնական շունչը, մթնոլորտը բավականին պահպանողական էր։ Սակայն այժմ զգալի բեկում է նկատվում, փոխվել է վերաբերմունքը այլադավանների ու այլազգիների նկատմամբ, մթնոլորտն ավելի հանդուրժողական է դարձել։ Այս ամենը հետեւանք են ամբողջ աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների։

Քաթարի մայրաքաղաք Դոհայում գործում է 2004 թ. հիմնադրված հայկական միօրյա Մեսրոպյան վարժարանը, որը 2008 թ. ուներ 4 դասարան, 25 սան, իսկ պարապմունքներն անցկացվում էին լիբանանյան նո-

---

[41] *Տե՛ս* Հ Ա Մ Ա Ս Փ Յ Ո Ւ Ռ Գ Ր Ի Գ Ո Ր Յ Ա Ն, *Փոփոխություններից հետո ծնողները երեխաներին այլ դպրոցներ չեն տանի* // http://www.irates.am/hy/1494395990, *առ 9.09.2022։*

բակառույց դպրոցում[42]։ Շաբաթական մեկ օր, երկու ժամ տեւողությամբ վարժարանում դասավանդում են Հայոց լեզու եւ հայ գրականություն, Հայոց պատմություն եւ կրոն (լիբանանահայ համայնքի դպրոցական ծրագրերով)[43]։

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով եւ ի մի բերելով արձանագրենք, որ հայապահպանության սյուներն են՝ մայրենի լեզու, հավատք եւ հոգեւոր միասնություն, մշակույթ, ընտանիք եւ ազգային ավանդույթներ։ Այդ հիմքերն ամուր ու անաղարտ պահելու եւ հզորացնելու գործում անգնահատելի է հայ դպրոցի ու հայեցի կրթության դերը։ Հայապահպանության այժմեական ու հրատապ լուծում պահանջող խնդիրներ են սպիտակ եղեռնի՝ ուծացման մարտահրավերներին դիմագրավումը կանխարգելիչ համատեղ ծրագրերի իրականացման միջոցով, խառնամուսնությունների նվազեցում ու, ի վերջո, բացառում, այլադավան, այլախոս եւ ոչ հայկական մշակույթի ներկայացուցիչ ու ոչ հայոց ազգային արժեհամակարգի կրող ազգակիցների շրջանում հայ ազգային ինքնագիտակցության ձեւավորում եւ ամրապնդում, հայեցի կրթություն ստանալու անհրաժեշտության գիտակցման ապահովում։ Անհրաժեշտ է ծրագրեր մշակել մայրենի լեզվով հաղորդակցվողների թվաքանակի ավելացման, հայերեն լեզվամտածողության ձեւավորման ու զարգացման, միջանձնային շփումների ու ներհամայնքային կյանքի աշխուժացման, ազգային կրթական ու մշակութային հաստատությունների, հայկական ակումբների ցանցի ընդլայնման, միօրյա դպրոցների ստեղծման, իսկ գործող միօրյա դպրոցները ամենօրյա դարձնելու, նոր հայագիտական կենտրոններ ստեղծելու, գործող հայագիտական ամբիոնների հզորացման եւ գործունեության արդյունավետության բարձրացման, հայալեզու տպագիր եւ թվային լրատվամիջոցների ստեղծման ու տարածման, հայալեզու ձայնասփյուռի եւ հեռուստաալիքների թողարկման, հայկական վարժարանների համար միասնական առարկայական ծրագրերի ու դասագրքերի ստեղծման, սփյուռքահայ ուսուցիչների համար կարճաժամկետ ու երկարաժամկետ առկա եւ հեռավար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու եւ անցկացնելու,

---

[42] *Տե՛ս* Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՓԱՇԱՅԱՆ, *նշ. աշխ., էջ 32։*

[43] *Տե՛ս* http://diaspora.gov.am/hy/pages/50/qatar, *մուտք՝ 30.05.2024 թ.*

Մայր հայրենիք այցեր, ուխտագնացություններ կազմակերպելու եւ հայրենաճանաչողությունը զարգացնելու նպատակով։ Այս ամենը կազմակերպելու եւ արդյունավետ իրականացնելու համար պետք է մեկտեղել Մայր հայրենիքի ու Սփյուռքի ամբողջ ներուժը, շահագրգիռ ազգանվեր բոլոր կառույցներն ու կազմակերպությունները, ազգային բարերարներին, Հայոց Եկեղեցին եւ հատկապես հայ ընտանիքը[44]*։*

Շատ են հատկապես անելիքները կրթական մարզի մեջ։ Առանձնակի հրատապ են ուսումնական միասնական ծրագրերի մշակման ու դրանց համապատասխան դասագրքերի եւ ուսումնաօժանդակ նյութերի ստեղծման, ուսուցիչների վերապատրաստման, Հայրենիքում Հայոց լեզվի, Հայոց պատմության, հայ մշակույթի եւ արվեստի տարբեր բնագավառների մանկավարժ-ուսուցիչների եւ անհրաժեշտ այլ մասնագետների պատրաստման եւ արհեստավարժ մանկավարժներով սփյուռքահայ կրթարանները սեփական, կայուն, մշտական դպրոցական շենքով, նյութատեխնիկական միջոցներով ապահովելու խնդիրները։

Եւ այս համապատկերում հարկ է նկատել, որ Ծոցի ազգային կառույցները պատվով ու արդյունավետ են կատարում իրենց առջեւ դրված գլխավոր խնդիրը. այն է՝ համախմբել հայությանը, արդյունավետ կազմակերպել հայեցի կրթության գործը, նպաստել մատաղ սերնդի՝ ազգային եւ համամարդկային մնայուն արժեքների ու ավանդույթների ոգով դաստիարակության գործին։ Այստեղ, ինչպես նաեւ սփյուռքահայ մյուս համայնքներում, հայեցի կրթության ու հայապահպանության դարբնոցը դպրոցն է՝ հանձինս սրտացավ, առաքելանվեր ու առաքելակատար հայ ուսուցիչների։ Ուստի հայեցի կրթության իրականացման հայրենանվեր գործում հայ դպրոցին եւ ուսուցչությանը մեծապես պետք է սատարեն համահայկական ու համայնքային, ինչպես նաեւ ՀՀ պատասխանատու կառույցները։

Հայեցի կրթության իրականացման շրջանակներում Ծոցի հայ համայնքների միօրյա վարժարաններում դասավանդվում են Հայոց լեզու եւ հայ գրականություն, Հայոց պատմություն, երգ-երաժշտություն, կրոն (Հայ Եկեղեցու պատմություն), իսկ կիրակնօրյա վարժարաններում,

---

[44] *Տե՛ս Հայաստան–Սփյուռք գործակցության զարգացում. պետական քաղաքականությունը (2008–2016 թթ.)* // http://www.armenianlanguage-am.armin.am/images/menus/1703/Hranush-Hakobyan.pdf, *մուտք՝ 30.05.2024 թ.։*

որոնք գործում են թեմական ենթակայությամբ եւ եկեղեցիներին կից, մեկուկես ժամ տեւողությամբ դասընթացներն ընթանում են 4 դասարաններում՝ սկսնակ, կրտսեր, միջին եւ պատանի։ Կիրակնօրյա վարժարաններում ուսուցանում են գրաբար, կրոնական, ծիսական եւ բարոյագիտական գիտելիքներ, աղոթքներ, սաղմոսներ։ Այս վարժարանների ծրագրի մաս են կազմում տարեկան կրթադաստիարակչական ձեռնարկները, ձեռքի աշխատանքը, ցուցահանդես-վաճառքների կազմակերպումը, թատրոնը, ուսանելի խաղերը եւ այլն։

Իսկ Ծոցի միակ ամենօրյա հայկական կրթարանը՝ Քուվեյթի Հայ ազգային վարժարանը, որը 2016–2017 ուսումնական տարում ուներ 398 սան, իր գործունեությունն է շարունակում բոլոր բաժիններով՝ մանկապարտեզ, նախակրթարան (1–4-րդ դասարաններ), միջնակարգ (5–8-րդ դասարաններ) եւ երկրորդական (9–12-րդ դասարաններ)։ Բացի պետության սահմանված պարտադիր հանրակրթական առարկաներից՝ վարժարանում դասավանդվում են (արեւմտահայերենով) հայոց լեզու եւ հայ գրականություն (Բերիո թեմի ծրագրով), Հայոց պատմություն (Ամերիկայի Արեւմտյան թեմի ծրագրով), կրոն, անգլերեն։ Ցավոք սրտի, ո՛չ Խորհրդային Հայաստանի, ո՛չ իսկ անկախ Հայաստանի Հանրապետության իրավասու եւ պատկան մարմինների կողմից այդպես էլ չստեղծվեցին Հայկական սփյուռքում գործող միօրյա վարժարանների համար միասնական առարկայական ծրագրեր ու չափորոշիչներ ու դրանց հիմա վրա գրված դասագրքեր։ Ուստի սփյուռքահայ յուրաքանչյուր համայնք ինքն է ընտրում ու որոշում կամ կազմում առարկայական ծրագրեր եւ իրականացնում հայեցի կրթություն ապահովման գործը։

Քուվեյթի Հայ ազգային վարժարանը, ինչպես նկատել ենք, Մերձավոր Արեւելքի հայկական ուսումնական հաստատությունների շարքում լավագույններից է։ Շրջանավարտներն ընդունվում են ոչ միայն արաբական երկրների բուհեր, այլեւ իրենց կրթությունը շարունակում են Հայաստանի եւ արտերկրի հեղինակավոր համալսարաններում դրանով իսկ ապացուցելով, որ հայեցի կրթությունը ամուր եւ հաստատուն հիմքերի վրա է։

РЕЗЮМЕ

Армянские общины арабских государств Залива – Кувейта, ОАЭ, Катара, Йемена, Бахрейна, Саудовской Аравии, Омана – в отличие от многих общин классических армянских колоний сформировались не в результате Геноцида армян и принудительного переселения с исторических земель. Эти общины являются молодыми формированиями диаспоры, возникшими в результате внутренних миграционных процессов и естественного прироста армянского населения за пределами Армении.

Фактически армянские общины стран Залива сформировались преимущественно в результате трудовой миграции. В последней четверти XX века и в первые десятилетия XXI века армяне из Сирии, Ливана, Ирака, Египта, Ирана и Иордании переселялись в арабские страны Залива, где остро ощущалась потребность в квалифицированных специалистах. Это способствовало формированию новых или заметному расширению уже существующих армянских общин в этих государствах.

Епархиальные советы и национальные управления армянских общин Кувейта, ОАЭ, Катара с честью успешно выполняют поставленную перед ними главную задачу: сплочение армян, организация системы национального образования и содействие воспитанию молодого поколения в духе национальных и общечеловеческих непреходящих ценностей и традиций. Как и в других центрах диаспор, школа здесь является главной кузницей армянского духа и национальной идентичности благодаря преданным, отзывчивым и самоотверженным учителям-армянам. В этом важном патриотическом деле национального образования армянской школе и педагогам оказывают активную поддержку как общеармянские и местные структуры, так и соответствующие органы власти Армении.

В рамках реализации национального образования в армянских общинах стран Залива в действующих однодневных школах преподаются армянский язык и армянская литература, история Армении, пение, музыка, религия (история Армянской церкви). В воскресных школах, действующих в юрисдикции епархий, полуторачасовые занятия проходят в 4-х разноуровневых классах: начальный, младший, средний и подростковый. В этих школах преподают грабар (древнеармянский язык), религиозные, обрядовые и этические знания, молитвы, псалмы. Программа этих школ включает ежегодные образовательно-воспитательные мероприятия, рукоделие, театр, развивающие игры и прочее.

Единственное армянское учебное заведение с ежедневной формой обучения в странах Залива – Армянская национальная школа Кувейта, которая в 2016–2017 учебном году насчитывала 398 учеников, – продолжает успешно функционировать на всех ступенях образования: детский сад, начальная школа (1–4 классы), средняя школа (5–8 классы) и старшая школа (9–12 классы). Помимо обязательных государственных общеобразовательных предметов в школе преподают на западноармянском языке: армянский язык и литература (по программе Берийской епархии), история Армении (по программе Западной епархии Америки), религия и английский язык. Школа по праву считается одной из лучших армянских образовательных учреждений Ближнего Востока. Её выпускники поступают как в университеты арабских стран, так и продолжают обучение в высших учебных заведениях Армении.

SUMMARY

The Armenian communities of the Arab Gulf States – Kuwait, UAE, Qatar, Yemen, Bahrain, Saudi Arabia, Oman – unlike many communities of classical Armenian colonies were not formed as a result of the Armenian Genocide and forced displacement from historical lands. These communities are young Diaspora formations that emerged as a result of internal migration processes and natural growth of the Armenian population outside Armenia.

In fact, the Armenian communities of the Gulf countries were formed mainly as a result of labor migration. In the last quarter of the 20th century and in the first decades of the 21st century, Armenians from Syria, Lebanon, Iraq, Egypt, Iran and Jordan moved to the Arab countries of the Gulf, where the need for qualified specialists was acutely felt. This contributed to the formation of new Armenian communities in these states or the marked expansion of existing ones.

The diocesan councils and national administrations of the Armenian communities of Kuwait, the UAE and Qatar are successfully fulfilling their main task: uniting Armenians, organizing the national education system and promoting the upbringing of the younger generation in the spirit of national and universal values and traditions. As in other Diaspora centers, the school here is the main forge of the Armenian spirit and national identity thanks to dedicated, responsive and selfless Armenian teachers. In this important patriotic endeavor of national education, the Armenian school and

teachers are actively supported by both pan-Armenian and local structures, as well as the relevant Armenian authorities.

Within the framework of the realization of national education in the Armenian communities of the Gulf countries, Armenian language and Armenian literature, Armenian history, singing, music, religion (history of the Armenian Church) are taught in the functioning one-day schools. In the Sunday schools operating in the jurisdiction of the dioceses, one and a half hour classes are held in 4 different levels: elementary, junior high, high school and teenage. These schools teach Classical Armenian language, religious, ritual and ethical knowledge, prayers, psalms. The program of these schools includes annual educational activities, handicrafts, theater, developmental games and other.

The only Armenian educational institution with a daily form of education in the Gulf countries, the Armenian National School of Kuwait, which had 398 students in the 2016–2017 school year, continues to function successfully at all levels of education: kindergarten, elementary school (grades 1–4), middle school (grades 5–8) and high school (grades 9–12). In addition to the mandatory state general education subjects, the school teaches the following subjects in Western Armenian: Armenian language and literature (according to the program of the Diocese of Beria), Armenian history (according to the program of the Western Diocese of America), religion and English. The school is rightfully considered one of the best Armenian educational institutions in the Middle East. Its graduates both enter universities in Arab countries and continue their studies in higher educational institutions of Armenia.